ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 13-Ա

22 դեկտեմբերի 2017 թվականի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 20-Ի ԹԻՎ 7-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, 34-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի, 1-ին կետի <<բ>> ենթակետի դրույթներով

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն 1, 2 հավելվածների:

2.Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնին՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելու համար:

3.Համայնքային ծառայության պաշտոնների մասով սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

4.ՈՒԺը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 20-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> թիվ 7-Ա որոշումը:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Անի համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ -11 Դեմ -2 Ձեռնպահ -2

Ալավերդյան Նաիրի
Հովսեփյան Կամսար
Ղզրոյան Գևորգ
Ղազարյան Մաուլեն
Մելիքյան Բաբիկ
Նաջարյան Արմենակ
Նիկոյան Արմեն
Շաբոյան Գևորգ
Ուռումյան Արթուր
Սահակյան Վահրամ
Սարգսյան Ձավեն

Արսենյան Արսեն
Սաղաթելյան Ագուն

Վարոսյան Արսեն
Գևորգյան Սուրեն

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Անի համայնքի ղեկավար՝ Արտակ Գևորգյան

«22» դեկտեմբերի 2017 թվական
քաղաք Մարալիկ

ՀԱՎԵԼՎԱԾ N 1
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի ԹԻՎ 13-Ա ՈՐՈՇՄԱՆ

ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

1. կառուցվածքային ստորաբաժանում

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի աշխատակազմի Ներքին աուդիտի բաժին

1. առանձնացված ստորաբաժանում

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքացիական կացության ակտերի գրանցման բաժին

Անի համայնքի ղեկավար Ա.Գևորգյան

ՀԱՎԵԼՎԱԾ N2
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի ԹԻՎ 13-Ա ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատողների քանակը՝ 75

Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

Հ/Հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքների քանակը	Հաստիքային միավորը	Հաստիքային մեկ միավորի ամսական պաշտոնային դրույքաչափը (հազ. դրամ)	Ընդամենը ամսական աշխատավարձ (հազ. դրամ)
	1.ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՇՏՈՆ				
1)	Համայնքի ղեկավար	1	1	370.0	370.0
	2. ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ				
1)	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	1	260.0	260.0
2)	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	1	200.0	200.0
3)	Համայնքի ղեկավարի խորհրդական	1	1	150.0	150.0
4)	Համայնքի ղեկավարի օգնական	1	1	140.0	140.0
5)	Վարչական ղեկավար (մինչև 600 բնակիչ ունեցող՝ Անիպեմզա, Անիավան, Աղին, Հայկաձոր, Սարակապ բնակավայրերում)	5	1	170.0	850.0
6)	Վարչական ղեկավար (601-1000 բնակիչ ունեցող՝ Գուսանագյուղ, Շիրակավան, Բագրավան, Ջրափի, Լուսաղբյուր, Լանջիկ բնակավայրերում)	6	1	190.0	1140.0
7)	Վարչական ղեկավար (1001-1500 բնակիչ ունեցող՝ Իսահակյան, Ձորակապ, Ձիթհանքով, Քարաբերդ բնակավայրերում)	4	1	210.0	840.0
8)	Վարչական ղեկավար (1500 և ավելի բնակիչ ունեցող՝ Սառնաղբյուր բնակավայրում)	1	1	230.0	230.0
	ԸՆԴԱՄԵՆԸ	20			3810.0
	2. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ				
1)	Աշխատակազմի քարտուղար	1	1	270.0	270.0
	ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ				
	Քաղաքացիական կացության ակտերի գրանցման Անիի տարածքային բաժին				
2)	Բաժնի պետ	1	1	256.6	256.6
3)	1-ին կարգի մասնագետ	1	1	133.6	133.6
	ԸՆԴԱՄԵՆԸ	2			390.2
	3.ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ				

Ներքին աուդիտի բաժին					
4)	Բաժնի պետ	1	1	193.0	193.0
5)	1-ին կարգի մասնագետ	1	1	115.0	115.0
	ԸՆԴԱՄԵՆԸ	2			308.0
Աշխատակազմ (ստորաբաժանումների մեջ չներառված պաշտոններ)					
6)	Գլխավոր մասնագետ-հաշվապահ	1	1	156.0	156.0
7)	Գլխավոր մասնագետ	4	1	156.0	624.0
8)	Առաջատար մասնագետ	6	1	140.0	840.0
9)	1-ին կարգի մասնագետ	5	1	115.0	575.0
10)	2-րդ կարգի մասնագետ	24	1	100.0	2400.0
	ԸՆԴԱՄԵՆԸ	40			4595.0
4. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ					
1)	Գործավար	1	1	115.0	115.0
2)	Էլեկտրիկ	1	1	120.0	120.0
3)	Տնտեսվար	1	1	100.0	100.0
4)	Վարորդ (ծառայողական ավտոմեքենայի)	2	1	100.0	200.0
5)	Հավաքարար (վարչական շենքի)	1	1	100.0	100.0
6)	Ցերեկային պահակ-բակապահ	1	1	100.0	100.0
7)	Ակումբավար	1	1	100.0	100.0
8)	Մեխանիկ	1	1	100.0	100.0
	ԸՆԴԱՄԵՆԸ	9			935.0

ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ն 15-Ա

22 դեկտեմբերի 2017 թվականի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԱՆԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի,<<Պետական կառավարչական հիմնարկների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերի դրույթներով.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Անի կոմունալ տնտեսություն >> համայնքային բյուջետային հիմնարկ:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Անի կոմունալ տնտեսություն >> համայնքային բյուջետային հիմնարկի կանոնադրությունը՝ համաձայն թիվ 1 հավելվածի:
3. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Անի կոմունալ տնտեսություն >> համայնքային բյուջետային հիմնարկի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն թիվ 2 հավելվածի:
4. Դիմել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի պետական ռեգիստրի գործակալություն ՝ օրենքով սահմանված կարգով հիմնարկը պետական ռեգիստրում գրանցում կատարելու համար:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Անի համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -2

Ալավերդյան Նաիրի

Արսենյան Արսեն

Գևորգյան Սուրեն

Հովսեփյան Կամսար

Ղզրոյան Գևորգ

Ղազարյան Մառլեն

Մելիքյան Բաբիկ

Նաջարյան Արմենակ

Նիկոյան Արմեն

Ուռումյան Արթուր

Սահակյան Վահրամ

Սարգսյան Ձավեն

Վարոսյան Արսեն

Սաղաթելյան Ագուն

Շաբոյան Գևորգ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի

Անի համայնքի ղեկավար՝ Արտակ Գևորգյան

«22» դեկտեմբերի 2017 թվական

քաղաք Մարալիկ

ՀԱՎԵԼՎԱԾ N 1
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի ԹԻՎ 15-Ա ՈՐՈՇՄԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԱՆԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿ

2017ԹՎԱԿԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԱՆԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. <<Անի կոմունալ տնտեսություն>> համայնքային բյուջետային հիմնարկը / այսուհետ՝ հիմնարկ /շահույթ ստանալու նպատակ չհետապնդող իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է:

2. Հիմնարկն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով /այսուհետ օրենսգրքով/, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> ՀՀ օրենքով /այսուհետ օրենք/, ՀՀ իրավական այլ ակտերով և սույն կանոնադրությամբ:

Հիմնարկն իր անունից ձեռք է բերում և իրականացնում է գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրում պարտականություններ, դատարանում կարող է հանդես գալ՝ որպես հայցվոր կամ պատասխանող:

3. Հիմնարկը կարող է ունենալ ՀՀ զինանշանի պատկերով հայերեն կլոր կնիք, իր անվամբ ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ:

4. . Հիմնարկն ունի ընդհանուր հաշվեկշիռ և բանկային հաշիվ:

5. . Հիմնարկի իրավունակությունը ծագում է նրա ստեղծման /պետական գրանցման/ և դադարում է լուծարման ավարտի /լուծարման մասին պետական գրանցման մատյանում/ պահից:

6. . Հիմնարկի անվանումն է.

Հայերեն լրիվ՝ <<Անի կոմունալ տնտեսություն>> համայնքային բյուջետային հիմնարկ:

7. . Հիմնարկի գտնվելու վայրը՝

ՀՀ Շիրակի մարզ, Անի համայնք,քաղաք Մարալիկ, Մադաթյան փողոց 1:

2.ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՍԱԿՆԵՐՆ ԵՆ

1.Հիմնարկը կարող է իրականացնել գործունեության հետևյալ տեսակները՝

1) Անի համայնքի վարչական տարածքում իրավաբանական և ֆիզիկական անձանց, ինչպես նաև ազգաբնակչության աղբահեռացման ծառայությունների մատուցում,

2) համայնքի վարչական տարածքի սանիտարական մաքրում,

3) Կանաչ տարածքների բարելավում և սպասարկում,

4) անձրևաջրերի հեռացման ցանցի սպասարկում,

5) շատրվանների, այգիների, խաղահրապարակների սպասարկում,

6) եզրաքարերի վերանորոգում,

7) սելավատարի սպասարկում,

8) համայնքի ենթակայության շենքերի և շինությունների սպասարկում:

9) ձյան մաքրման աշխատանքներ:

10)հուղարկավորությունների կազմակերպմանն ու գերեզմանատների ու դիակիզարանների շահագործմանն ուղղված գործառույթներ:

11) ջրագծերի և կոյուղահամակարգերի սպասարկում

2. Օրենքով սահմանված գործունեության առանձին տեսակներով հիմնարկը կարող է զբաղվել միայն լիցենզիայի /հատուկ թույլտվության/ առկայության դեպքում լիցենզիա ստանալու պահից:
3. Հիմնարկի իրավունքները կարող են սահմանափակվել միայն օրենքով նախատեսված դեպքերում :
4. Հիմնարկը կարող է զբաղվել նաև ՀՀ օրենսդրությանը և տվյալ կանոնադրությանը չհակասող այլ գործունեությամբ:

3. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. Հիմնարկի սեփականությունը ձևավորում է հիմնարկի հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնված գույքից:
2. Հիմնարկը իրավունք ունի օրենքին , հիմնադրի որոշումներին և (կամ) սույն կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետել և օգտագործել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:
3. Հիմնարկի սեփականության վրա կարող են բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:

4. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻՆ ԱՄՐԱՑՎԱԾ ԳՈՒՅՔԸ

1. Հիմնադիրը կարող է բյուջետային հիմնարկին անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել ցանկացած գույք:
2. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնել իր կողմից հիմնարկին ամրացված գույքը :
3. Հիմնարկն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքները օտարել , գրավ դնել, հանձնել անհատույց օգտագործման:
4. Հիմնարկն իրավունք ունի իրեն ամրացված գույքը համայնքի անունից հանձնել վարձակալության, եթե դա արգելված չէ հիմնադրի որոշմամբ: Ամրացված գույքի օգտագործման արդյունքում հիմնարկի ստացած եկամուտները նրա սեփականությունն են:
5. Հիմնադրի կողմից հիմնարկին ամրացված անշարժ գույքի կամ պետական պարտադիր գրանցման ենթակա գույքի նկատմամբ հիմնարկի օգտագործման իրավունքը ծագում է դրանց նկատմամբ իրավունքի պետական գրանցման պահից:

5. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

1. Հիմնարկի կառավարումը իրականացնում է հիմնադիրը:

2. Հիմնադիրը՝ լիազորված մարմինը՝
1) ապահովում է հիմնարկի բնականոն գործունեությունը, պատասխանատվություն է կրում դրա չկատարման կամ ոչ պատշաճ իրականացման համար,
2) վերահսկողություն է սահմանում հիմնարկին ամրացված համայնքի սեփականություն հանդիսացող գույքի օգտագործման և պահպանության նկատմամբ,
3) վերահսկողություն է իրականացնում և համաձայնություն է տալիս գույքի օգտագործման կամ վարձակալության հանձնման համար:
3. Հիմնարկի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենը, որին նշանակում և ազատում է հիմնադիրը:
4. Հիմնարկի տնօրենի հետ կնքվում է պայմանագիր: Պայմանագրով սահմանվում են տնօրենի իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունը և փոխհարաբերությունները հիմնադրի հետ, նրա վարձատրման պայմանները, պայմանագրի

5. Հիմնարկի տնօրենը ղեկավարում է հիմնարկի գործունեությունը և կրում է պատասխանատվություն օրենքների , իրավական ակտերի, հիմնադրի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

6. Հիմնարկի տնօրենը՝

1) առանց լիազորագրի հանդես է գալիս հիմնարկի անունից, ներկայացնում նրա շահերը և կնքում է գործարքներ,

2) ՀՀ օրենսդրությամբ հիմնադրի որոշումներով և սույն կանոնադրությամբ հաստատված կարգով տնօրինում է հիմնարկի գույքը, այդ թվում ֆինանսական միջոցները,

3) ներկայացնում է հիմնարկը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում,

4) տալիս է հիմնարկի անունից հանդես գալու լիազորագրեր,

5) աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում հիմնարկի աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր,

6) սահմանված կարգով հիմնադրին է ներկայացնում հիմնարկի եկամուտների և ծախսերի նախահաշիվը,

7) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իր լիազորության սահմաններում արձակում հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը:

8) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ:

7. Տնօրենը պարտավոր է չկատարել հիմնադրի ՀՀ օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, հրամանները, հրահանգները և դրանց չկատարման համար չի կարող ենթարկվել պատասխանատվության:

8. Հիմնարկի աշխատողների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ, աշխատանքային պայմանագրերով, աշխատանքային ներքին կանոնակարգերով և այլ իրավական ակտերով:

9. Տնօրենի բացակայության դեպքում, համայնքի ղեկավարի գրավոր որոշման (հրամանի) համաձայն, տնօրենի լիազորությունները իրականացնում է այլ անձ:

6. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

1. Հիմնարկը անժամկետ անհատույց օգտագործման իրավունքով օգտագործում /տիրապետում/ է իրեն ամրացված գույքը:

2. Հիմնարկի գույքը և ֆինանսական միջոցները ձևավորվում են.

1) համայնքի տրամադրած միջոցներից,

2) իրավաբանական անձանց և քաղաքացիների կամավոր վճարումներից և նվիրատվություններից,

3) դրամաշնորհներից,

4) ՀՀ օրենսդրությանը չհակասող այլ միջոցներից:

7. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

1. Հիմնարկի տարեկան եկամուտների և ծախսերի նախահաշիվը, հաստիքացուցակը, հաշվետվությունները և հաշվեկշիռը հաստատում է հիմնադիրը:

2. Հիմնարկի ֆինանսական միջոցները մուտքագրվում են կազմակերպության հաշվարկային հաշիվ:

3. Հիմնարկի ֆինանսական միջոցները գտնվում են իր տրամադրության տակ և բռնագանձման ենթակա չեն, բացի օրենքով սահմանված դեպքերից:

4. Հիմնարկում հաշվապահական և վիճակագրական հաշվառում կատարելու կարգը որոշվում է գործող օրենսդրությամբ:

5. Հիմնարկի ֆինանսատնտեսական գործունեության վերահսկողությունը իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

8. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

1. Հիմնարկը կարող է վերակազմակերպվել կամ լուծարվել հիմնադրի որոշմամբ և /կամ/ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և կարգով:
2. Հիմնարկը դատական կարգով կարող է վերակազմակերպվել կամ լուծարվել միայն օրենքով սահմանված դեպքերում և կարգով:
3. Հիմնարկը լուծարման դեպքում հիմնարկի պարտատերերի պահանջների բավարարումից հետո մնացած գույքը ուղղվում է Անի համայնք:

Անի համայնքի ղեկավար՝ Ա.Գևորգյան

ՀԱՎԵԼՎԱԾ N 2
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի ԹԻՎ 15-Ա ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
<<ԱՆԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ
2018 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝ 36

Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

հ/հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքների քանակը	Հաստիքային միավոր	Հաստիքային մեկ միավորի պաշտոնային դրույքաչափը (դրամ)
1	Տնօրեն	1	1	150000
2	հաշվապահ	1	1	90000
3	Սան մաքրման մեքենայի վարորդ-մեխանիկ	1	1	140000
4	Աղբաթափ մեքենայի վարորդ-մեխանիկ	1	1	140000
5	Կամազ մեքենայի վարորդ-մեխանիկ	1	1	100000
6	Քաղաքային պուրակի պատասխանատու-պահակ	1	1	72752
7	Աղբահանության վարձավճարների գանձող	1	1	72752
8	Աղբահանող բանվոր	4	1	100000
9	Փողոցների սան. մաքրող հավաքարար	6	1	100000
10	Կանաչ . գոտիների սան.մաքրող հավաքարար-բանվոր	1	1	100000
11	Կոյուղագծի բանվոր	1	1	72752
12	Ջրագծի փականագործ	16	1	90000
13	Ջրբաշ (Հայկաձոր բնակավայր)	1	1	90000

Անի համայնքի ղեկավար՝ Ա.Գևորգյան

ՀԱՎԵԼՎԱԾ N 2
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի ԹԻՎ 15-Ա ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
<<ԱՆԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ
2018 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝ 36

Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

հ/հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքների քանակը	Հաստիքային միավոր	Հաստիքային մեկ միավորի պաշտոնային դրույքաչափը (դրամ)
1	Տնօրեն	1	1	150000
2	հաշվապահ	1	1	90000
3	Սան մաքրման մեքենայի վարորդ-մեխանիկ	1	1	140000
4	Աղբաթափ մեքենայի վարորդ-մեխանիկ	1	1	140000
5	Կամազ մեքենայի վարորդ-մեխանիկ	1	1	100000
6	Քաղաքային պուրակի պատասխանատու-պահակ	1	1	72752
7	Աղբահանության վարձավճարների գանձող	1	1	72752
8	Աղբահանող բանվոր	4	1	100000
9	Փողոցների սան. մաքրող հավաքարար	6	1	100000
10	Կանաչ գոտիների սան.մաքրող հավաքարար-բանվոր	1	1	100000
11	Կոյուղագծի բանվոր	1	1	72752
12	Ջրագծի փականագործ	16	1	90000
13	Ջրբաշ (Հայկաձոր բնակավայր)	1	1	90000

Անի համայնքի ղեկավար՝ Ա.Գևորգյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 16-Ն

22 դեկտեմբերի 2017 թվականի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ԿԱՄ ՏԻՐԱՊԵՏՈՂԻ՝ ԻՐ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին

որոշում է՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի

Անի համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ալավերդյան Նաիրի

Արսենյան Արսեն

Գևորգյան Սուրեն

Հովսեփյան Կամսար

Ղզրոյան Գևորգ

Ղազարյան Մառլեն

Մելիքյան Բաբիկ

Նաջարյան Արմենակ

Նիկոյան Արմեն

Շաբոյան Գևորգ

Ուռումյան Արթուր

Սահակյան Վահրամ

Սաղաթելյան Ագուն

Սարգսյան Զավեն

Վարոսյան Արսեն

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի

Անի համայնքի ղեկավար՝ Արտակ Գևորգյան

«22» դեկտեմբերի 2017 թվական

քաղաք Մարալիկ

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի ԹԻՎ 16-Ն ՈՐՈՇՄԱՆ

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ԿԱՄ ՏԻՐԱՊԵՏՈՂԻ՝ ԻՐ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ

1. Սույն կարգով (այսուհետ՝ Կարգ) սահմանվում է Անի համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման էությունը, ծավալը և պայմանները (այսուհետ՝ պարտադիր բարեկարգում):

2. Պարտադիր բարեկարգումը՝ միջոցառումների համալիր է, որն ուղղված է Անի համայնքի սանիտարական վիճակի և գեղագիտական տեսքի պահպանմանն ու բարելավմանը, բնակչության բնակվելու պայմանների հարմարավետության բարձրացմանը, ինչպես նաև համայնքի ճարտարապետական տեսքի պահպանմանը, որոնք իրականացվում են անշարժ գույքի պարտադիր ընթացիկ նորոգման, ընդհանուր օգտագործման տարածքների պարբերաբար մաքրման և բարեկարգման միջոցով:

3. Պարտադիր բարեկարգման օբյեկտներն են՝ շենքերը, շինությունները և այլ կառույցները, ինչպես նաև անշարժ գույքին հարակից ընդհանուր օգտագործման հողամասերը և տարածքները:

4. Սույն կարգի գործողությունը տարածվում է Անի համայնքի վարչական սահմաններում տեղակայված (գտնվող)՝

1) բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերի առաջին, կիսանկուղային և նկուղային հարկերում գտնվող ոչ բնակելի նշանակության տարածքների (այսուհետ՝ օբյեկտներ) սեփականատերերի կամ տիրապետողների վրա,

2) առանձին տեղակայված հասարակական, արտադրական և այլ ոչ բնակելի նշանակության շենքերի, շինությունների և կառույցների (այսուհետ՝ օբյեկտներ) սեփականատերերի կամ տիրապետողների վրա,

3) այգիներում, պուրակներում և ընդհանուր օգտագործման այլ տարածքներում գտնվող սրճարանների, բարերի, ռեստորանների և զվարճանքի այլ օբյեկտների (այսուհետ՝ օբյեկտներ) սեփականատերերի կամ տիրապետողների վրա,

4) ավտոկանգառների և ավտոկայանատեղերի սեփականատերերի կամ տիրապետողների վրա,

5) բացօթյա շուկաների և տոնավաճառների սեփականատերերի կամ տիրապետողների վրա:

5. Պարտադիր բարեկարգման աշխատանքներն են՝

1) անշարժ գույքի արտաքին մասի պատշաճ պահպանման, այդ թվում՝ լվացման, և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարբերաբար մաքրման, բարեկարգման (սալիկապատման կամ ասֆալտապատման) աշխատանքները և մաքրության պահպանումը.

2) կանաչապատման համար նախատեսված տարածքների, սիզամարգերի, բուսածածկերի կանաչապատումը և դրանց անհրաժեշտ խնամքն ու պահպանումը.

3) անհրաժեշտ լուսավորություն՝ անշարժ գույքի մուտքի համար.

4) շենքերին ու շինություններին հարակից բակային տարածքների պարբերաբար մաքրումը և կանաչապատումը.

5) թեթև կոնստրուկցիաներով (մետաղյա խողովակ, ցանց, ճաղեր և այլն) ցանկապատում և դրանց փոխում, փոխարինում.

6) քաղաքային նշանակության փողոցներում գտնվող առևտրային նշանակության օբյեկտների տոնական զարդարումը՝ Ամանորի և Ծննդյան տոներին՝ յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 25-ից մինչև հաջորդ տարվա հունվարի 13-ը ներառյալ:

6. Շինարարության թույլտվություն չպահանջող բարեկարգման աշխատանքներն ապահովում են տարածքների կանաչապատումը, ծառատնկումը, ինչպես նաև բարեկարգման տարրերի վերականգնումը, նորոգումը, փոխումը, փոխարինումը:

7. Շինարարության թույլտվություն պահանջող և չպահանջող բարեկարգման աշխատանքների ցանկը սահմանված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի «Հայաստանի Հանրապետությունում շինարարության թույլտվության և քանդման թույլտվության կարգը հաստատելու մասին» N 91 որոշմամբ:

8. Բարեկարգման աշխատանքների կազմակերպման համար անշարժ գույքի սեփականատերերի և տիրապետողների կողմից կարող են կատարվել տարածքների չափագրում, կազմվել անհրաժեշտ աշխատանքների ցանկ, իսկ վերականգնման, նորոգման, փոխարինման աշխատանքների դեպքում՝ թերությունների մասին արձանագրություն:

9. Քաղաքաշինական օրենսդրությամբ նախատեսված կարգով՝ համաձայնեցված նախագծի և շինարարության թույլտվության առկայությամբ միայն կարող են իրականացվել հետևյալ աշխատանքները.

1) շենքի ճակատի նոր ճարտարապետական տարրեր, դրանց փոխարինում կամ վերացում.

2) տանիքի ձևի, ծածկույթի նյութի և գույնի փոփոխում.

3) լոջիաների ապակեպատում կամ ներքին մակերևույթների գունային փոփոխություններ.

4) պատշգամբների բազրիքաճաղերի նկարվածքի և գույնի փոփոխություններ.

5) բնական քարե շարվածքով իրականացված շենքերի ճակատների նյութի, ֆակտուրայի փոփոխություն և ներկում, ինչպես նաև նոր բացվածքների բացում կամ գոյություն ունեցողների փակում:

10. Գործող ընթացակարգերով սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքներն իրականացվում են Անի համայնքապետի (կամ նրա կողմից լիազորված անձի) կողմից համաձայնեցված ձևավորման նախագծին և (կամ) հատակագիծ-սխեմային համապատասխան: Նախագիծը անվճար մշակվում և տրվում է Անի համայնքապետարանի համապատասխան ստորաբաժանումների կողմից:

11. Պատմության և մշակույթի հուշարձանների պետական ցուցակում ընդգրկված շենքերի և կառույցների ճակատների վերակառուցումը և նորոգումն իրականացվում է հուշարձանների պահպանության պետական լիազոր մարմնի համաձայնությամբ: Ընդ որում՝ պետական լիազոր մարմնի կողմից կարող են տրվել նորոգման կամ վերակառուցման լուծումների վերաբերյալ հանձնարարականներ, որոնք ներառվում են Անի համայնքապետարանի կողմից տրվող ձևավորման նախագծում կամ ճարտարապետահատակագծային առաջադրանքում:

12. Անի համայնքապետարանի համապատասխան ստորաբաժանումների կողմից Կարգի կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման ընթացքում շենքի կամ շինության սեփականատիրոջը կամ տիրապետողին կարող են տրվել ցուցումներ շենքի ճակատների, օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքների վերականգնման կամ նորոգման աշխատանքների իրականացման վերաբերյալ, հիմնավորելով դրանց անհրաժեշտությունը և նշելով ժամկետները:

13. Պարտադիր բարեկարգման պահանջներն են՝

1) խանութների, հասարակական սննդի, բնակչության կենցաղային սպասարկման և այլ նմանատիպ օբյեկտների ցուցափեղկերը պետք է սարքավորված և ձևավորված լինեն պատշաճ ձևով և շահագործվեն սահմանված պահանջներին համապատասխան.

2) մայթերի բարեկարգման դեպքում պետք է կատարվեն հետևյալ պահանջները.

ա. ապահոված լինի տեսանելի մաքրությունը (փոշուց, աղբից, տերևներից և այլն) և անհրաժեշտ թվաքանակով աղբարկղերի առկայությունը, ընդ որում՝ մաքրման աշխատանքները պետք է կատարվեն առավոտյան ժամը 08.00-ից մինչև 09.00-ն և երեկոյան ժամը 18.00-ից մինչև 19.00-ն.

բ. ձմռանը պետք է իրականացվի տեղացած ձյան ամենօրյա մաքրումը՝ տեղումները դադարելուց 4 ժամ հետո կամ մինչև առավոտյան ժամը 11.00-ն, եթե ձյունը դադարել է նախորդ երեկո ժամը 21.00-ին և դրանից հետո.

գ. ձյան տեղումների ընդհատման ընթացքում մայթերի ասֆալտբետոնե ծածկերը և (կամ) սալիկապատված հատվածները պետք է ամբողջությամբ մաքրվեն ձյան և սառույցի կուտակումներից.

դ. ձյան մաքրման ընթացքում արգելվում է ձյան և սառույցի կույտերը կուտակել ճանապարհի երթևեկելի մասում: Թույլատրվում է միայն ժամանակավորապես կույտերը տեղավորել հասարակական տրանսպորտի կանգառների հետնամասում, սիզամարգերում, կամ ճամփեզրին.

ե. ճանապարհների, փողոցների եզրաքարերը պետք է ամբողջությամբ մաքրված լինեն ձնից և սառույցից:

14. Անի համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգումը իրականացնում է անշարժ գույքի սեփականատեր կամ տիրապետող հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձը:

15. Կանաչապատման աշխատանքները ենթակա են պարտադիր կատարման միայն Անի համայնքապետարանի աշխատակազմի կողմից տրամադրված ֆիտոնախագծի համաձայն:

16. Անշարժ գույքի սեփականատերը կամ տիրապետողը անշարժ գույքի արտաքին ճարտարապետական ցանկացած փոփոխություն համաձայնեցնում է Անի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության ու արտաքին ձևավորման և գովազդի բաժինների հետ:

17. Անշարժ գույքի սեփականատերը կամ տիրապետողը Կարգի համապատասխան՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման աշխատանքներն իրականացնում է ինքնուրույն կամ իր հաշվին՝ մասնագիտացված կազմակերպությունների ներգրավման միջոցով:

18. Այն դեպքում, երբ անշարժ գույքի սեփականատեր կամ տիրապետող են հանդիսանում մի քանի անձ, ապա դրանցից յուրաքանչյուրի մասնակցությունը պարտադիր բարեկարգման աշխատանքներին որոշվում է անշարժ գույքի նկատմամբ սեփականության կամ տիրապետման իրավունքում նրանց մասնակցության բաժնին համամասնորեն:

19. Այն դեպքում, երբ հատկացված հողամասի նկատմամբ սեփականության կամ օգտագործման իրավունքները, ինչպես նաև շենքի, շինության կամ դրանց տարածքի սեփականության կամ օգտագործման կամ այլ գույքային իրավունքները չեն ենթարկվել պետական գրանցման, ապա պարտադիր բարեկարգման և մաքրման է ենթակա այն տարածքը, որը փաստացի տիրապետվում է անշարժ գույքի տիրապետողի կողմից:

20. Անշարժ գույքին հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման աշխատանքների ծավալը որոշվում է՝

1) կրպակների, տաղավարների կամ մանրածախ առևտուր իրականացնող այլ օբյեկտների, հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների, բնակչության կենցաղային և այլ սպասարկման օբյեկտների, ինչպես նաև առևտրի այլ օբյեկտների, ավտոտնակների համար՝ հատկացված կամ զբաղեցրած տարածքի պարագծից 5 մետր, կառույցից դուրս՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,

2) բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերի առաջին, կիսանկուղային և նկուղային հարկերում գտնվող ոչ բնակելի նշանակության տարածքների համար՝ դրանց զբաղեցրած պարագծով՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,

3) առանձնատների համար՝ դրանց զբաղեցրած հողամասի պարագծով՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,

4) ավտոկանգառների և ավտոկայանատեղերի համար՝ հատկացված և (կամ) զբաղեցված ամբողջ տարածքի պարագծից 10-50 մետր (կախված օբյեկտի տարողականությունից և հզորությունից),

5) արդյունաբերական և շինարարական օբյեկտների համար՝ հատկացված և (կամ) զբաղեցված ամբողջ տարածքի պարագծից առնվազն 50 մետր՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,

6) առողջապահական և կրթական օբյեկտների համար՝ հատկացված և (կամ) զբաղեցված ամբողջ տարածքի պարագծից առնվազն 10 մետր՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,

7) շուկաների, տոնավաճառների, առևտրի կենտրոնների համար՝ հատկացված և (կամ) զբաղեցված տարածքի պարագծից 50-100 մետր՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը:

21. Սույն կարգով նախատեսված դրույթների խախտումն առաջացնում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված պատասխանատվություն:

Անի համայնքի ղեկավար՝ Ա.Գևորգյան